ՍԷՐ

(Նուէր ***-ին)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Սիրում եմ ես քեզ, մանուկ գեղեցիկ,
Բայց ոչ տղայական այն անմիտ սիրով,
Որով սիրեցին քեզ շատ պատանիք,
Լոկ գեղեցկութեանդ երկրպագելով։
Գըրաւիչ էիր դու նոցա համար
Իբրև մի խօսուն, պճնազարդ տիկնիկ,
Որ ունէր միայն աչեր բոցավառ,
Վարդագոյն շրթունք, սիրուն խոպոպիք.
Որի գեղատես, նազելի կրծքին
Ծաղկում էր փարթամ եղեմ փափկութեան,
Եւ որի համբոյրն ամենքի աչքին
Հեշտալից կրքի վայելք էր միայն...
Եւ նոքա քո շուրջ միշտ վխտում էին,
Որպէս խաղալիկ սիրող մանուկներ,
Եւ քո ականջին շըշընջում էին
Փքուն գովասանք, սիրահաճ խօսքեր...

Սիրում եմ ես քեզ, բայց ոչ այդ սիրով,
Ո՛վ իմ թանկագին, մտերիմ ընկեր,
Սիրում եմ ես քեզ մյլ զգացմունքով,
Մի վեհ զգացմունք, որ զով, կենսաբեր

Ինչպէս գարնան ցօղ թառամած ծաղկին,
Ցօղում է լքեալ սրտին թարմութիւն.
Որ ինչպէս զեփիւռ հրատապ շոգին,
Բերում է այրւած կրծքին զովութիւն.
Մի ջերմ զգացմունք, որ պայծառ լուսով
Փայլում է միայն անկեղծ սրտերում,
Որ վառ ըղձերով, ոսկեշող յուսով
Մեզ կեանք է տալիս և ոգևորում։
Դու սիրելի ես, փափկասուն էակ,
Որպէս անսպառ աղբիւր երգերիս,
Որպէս իմ բարի, սփոփիչ հրեշտակ,
Որպէս արձագանք լաց ու ծիծաղիս։

Սիրում եմ ես քեզ, սիրում ջերմագին,
Ինչպէս անդրանիկ մի ծաղիկ գարնան,
Որ աւետում ես իմ տխուր կեանքին
Նորից ծաղկավառ օրեր խնդութեան.
Որ իբրև շքեղ, դալար մի օազ,
Ժպտում ես դու իմ անապատ կեանքում,
Որ իբրև թովիչ, գողտրիկ մի երազ,
Ցնորքի հուր ես վառում իմ կրծքում։
Սիրում եմ ես քեզ, քո քնքոյշ հոգին,
Եւ այն կանացի գորովն ու դլուանք,
Որ դանձի նման, ջերմ կրծքիդ տակին,
Պահւած են իբրև հոգոյդ զարդարանք.
Որ լցւած խնամքի բուռն զգացմունքով՝
Պատրաստ ես դու միշտ խղճուկ, անպաշտպան
Թշւառի համար անկեղծ արցունքով
Ե՛ւ լալ, և՛ սիրով փայփայել նորան...

Սիրում եմ ես քեզ, ով հոգոյս հատոր,
Անհուն, անսահման, ճշմարիտ սիրով.
Մի սէր, որ չէ միշտ անհոգ, բախտաւոր,
Որ միշտ չէ յուզւում այրող կրքերով...

Սէր, որ սիրողին անոյշ վարդի հեա
Բերում է և՛ փուշ ծանրը հոգսերի,
Սէր, որ չը գիտէ կեանք երանաւէտ՝
Առանց տանջանքի, առանց վշտերի.
Եւ այդ բազմահոգ, վշտառատ կեանքում
Միշտ քաջ, անվհատ տանջելու համար
Սիրում եմ ես քեզ. կեանքի փոթորկում
Սէրն է եռանդի աղբիւր անսպառ։
Սիրում եմ ես քեզ, չքնաղ արարած,
Սիրավառ սրտով խաչէս կրելու.
Սիրում եմ ես քեզ—միշտ ողբորւած՝
Կեանքում ապրելու, կեանքը օրհնելու...

Մոսկւա, 13 յունւարի 1893 թ.